ածուց երբեմն ատաղձուց։ Կրճատ ձևերում վերջին վանկը կորցնելով այլագանութիւններից կան և՛ ապաք և՛ ասվաք, որոնք առընչութիւն ունեն նախատիպ սաբաց-ի ('sabaʒ-)-ի հետ։ այս այլագանութիւնները հասել են մեզ սահուն յառաջխաղացութեամբ միայն բարդ բառի կազմով։ Այլագանութիւնները ինքն ըստ ինքեան ժամանակի ընթացքի հետ ոչ էք են-թարկուէին նոր փոփոխութեան, այդ այլագանութիւնները անկորուստ պահող բարբառները կորցնում են ր, նախատիպս մեղմացնելով և յ դարձնելով, այսպէս օրինակ մոկաց բարբառում ունենք թափվի, լատու, երի, ձի, մի, էսու, էնու, խամա, փշում, փոխանակ թափվիր, լատուր, երիր,, (հայ հաՀ երեր), ձիր (ձեր) միր (մեր), էսուր, էնուր, խամար (հաՀ) համար), փշուրմի. հետևաբար ասպաք և ասվաք-ից ոչ էք (ասպայ և ասվայ-ի միջոցով) ստացած լինեն ասպա և ասվա։ այս նորաձևութիւնները, յիրաւի, պահպանուել են, բայց, այս նուազ Ասպատուր և ասվատուր անունի կազմի մէջ»։

Մենք համարեա բառացի թարգմանութեամբ մէջ բերինք պ. Ն. Մառի Սաբազիոս (Σαβαζιος) բառի մասին տեսութեան գլխաւոր էջերը։ և վերջացնում ենք մեր մատենախօսութիւնը յարգելի ճեմարանական ուսուցչապետի ճիւղագրական տախտակը ևս դնելով։

Յուսիկ Կարեպս.

Նոր—Նախիջեւանի Հայոց Եկեղ. Հոգաբարձութիւնը

Ստացանք Նոր-Նախիջևանի Հայոց Եկեղեցական Հոգաբարձութեան 1910 թուականի հաշիւը։

Հայերէն ռուսերէն է կազմուած այդ հաշիւը և շատ լաւ տպաւորութիւն է գործում ընթերցողի վրայ ոչ միայն իւր արտաքինով-մաքուր և գեղեցիկ տպագրութիւն Աւագեանի՝ Ն. Նախիջևանում—այլ և իւր բովանդակութեամբ։ Ամեն ինչ պարզ է, որոշ և մէկին. երևում է, որ գործողները ունին մշակած գործունէութեան որոշ ուղի, որին և հետևում են անշեղ։

«Նոր-Նախիջևանի հայազգի աղքատախնամ Եկեղեցական Հոգաբարձութիւնը» 1910 թուականով բոլորել է իւր գոյութեան 21-րդ տարեշրջանը և ամենայն տարի հայ հասարակութեան մատուցել է իւր մանրամասն հաշիւները, որոնք միշտ էլ անթերի են նկատուած։

Եկեղեցական Հոգաբարձութիւնը ունի հետևեալ կազմը.— քաղաքի վեց եկեղեցիների երեսփոխները անփոփոխելի անդամ են այդ Հոգաբարձութեան խորհրդարանի. բացի դրանցից լուրաքանչիւր եկեղեցի ընտրում է նաև մի-մի անդամ հոգաբարձութեան՝ երեք տարի ժամանակով. այլ և թեմի Առաջնորդը տեղի քահանաներից երկու հոգի նշանակում է անդամ, որից մէկը հաստատւում է որպէս փոխ-նախագահ. իսկ նախագահը ընտրւում է խորհրդարանի բոլոր անդամների կողմից: Եկեղեցական հոգաբարձութեան գործունէութեան քննութիւնն ու հաշուեառութիւնը պատկանում է Ն. Նախիջևանի հայ հասարակութեան, որը այդ նպատակով իւր միջից ընտրում է 60 հոգի (լուրաքանչիւր եկեղեցի 10 հոգի), որ գումարւում է ընդհանուր ժողովի, ընտրում է վերստուգիչ Յանձնաժողովի անդամներ և քննութեան է ենթարկում հոգաբարձութեան գործունէութիւնն ու դիրեկտիւներ մշակում ապագայ գործունէութեան համար՝ համաձայն օրէնքների ու եղած կտակների ճիշտ իմաստի:

Եկեղեցական Հոգաբարձութիւնը 1910 թուականի միջոցին ունեցել է ընդամենը 61058 ռ. 70 կ. մուտք, որը գոյացել է՝ անշարժ կայքերի եկամտից՝ 50380 ռ. 28 կ., տոկոսաբերթերից՝ 5526 ռ. 39. նուիրատուութիւններից 2252 ռ. 50 կ., % և ընթացական հաշուով 617 ռ. 16 կ., մնացեալը զանազան աղբիւրներից: Իսկ այդ աղբիւրները տարէց տարի աւելանում են ոչ միայն այն պատճառով, որ կալուածների գները բարձրանալով, բարձրանում են նաև նրանց վարձագինը, այլ և այն պատճառով, որ եկեղեցական հոգաբարձութեան անդամները իրենց մէջ բաժանելով հոգաբարձութեան գործերը, ամեն մէկը օրինակելի նախանձախնդրութեամբ ջանք է գնում առաջ տանելու իրեն յանձնուած մասը և արդիւնաւոր կացուցանել այն: Եւ այդ իսկ պատճառով համաբեր թէ չէ լինում տարի, որ եկեղեցական հոգաբարձութիւնը նորանոր կտակներով նոր շէնքերի ու դրամի տէր չդառնար: Այսպէս, օրինակ, հէնց 1910 թուին Սահակեան Թորոսը թողել է առ ձեռն դրամ 500 ռ., Հայրապետեան Պետրոսը 200 ռ., Խոմաճեան Վասիլը 5000 ռ., Յովհաննէս Խաթրանեանը 25000 ռուբլով գնել և եկեղեցական հոգաբարձութեան է նուիրել քաղաքի կենդրոնում մի պատուական շէնք՝ հոգաբարձութեան ունեցած որբանոցն այդտեղ զետեղելու պայմանով: Լուսպիրք Խալիթեանցի կտակով յանձնուած է նոյն եկեղեցական Հոգաբարձութեանը:

Ի՞նչ բանի վրայ է ծախսում Եկեղ. Հոգաբարձութիւնը իւր միջոցները և ո՞րքան դրանք նպատակայարմար կիրառութիւն են ստանում:

Այդ բանը աչք ծակելու չափ աչքի է ընկնում։ Եկեղեցական Հոգաբարձութիւնը 1910 թ. ընթացքում ելք ունեցել է 59575 ռ. 77 կ. համարեա իւր ամբողջ մուտքը։ Այդ գումարից ծախսել է սանների պահպանութեան համար 13624 ռ. 46 կ., ուսման համար միանուագ նպաստ տրուած է 1874 ռ. 80 կ., նպաստ ծխական դպրոցներին 6100 ռ., Մանկապարտէզին 250 ռ., Կար ու ձևի արհեստանոցին 250 ռ., չքաւոր աշակերտ-աշակերտուհիներին հանդերձեղէն և դասական պիտոյք 832 ռ. 84 կ., ընդամենը ուսումնարանական գործի համար ծախսուած է 22932 ռ. 10 կ։ Բացի որանից, Հոգաբարձութիւնը իւր որբանոցի վրայ ծախսել է 3484 ռ. 24 կ. որը նմանապէս պէտք է նկատել որպէս մի դպրոց, քանի որ որբանոցն ունի իւր յատուկ դասատիրակուհիները, որոնք երեխաների հետ պարապում են և նրանց պատրաստում այս կամ այն դպրոցի համար։ Այլ և Հոգաբարձութիւնը պահում է առանձին ճեմարանի դպրոց, որի վրայ ծախսել է նոյնպէս դպրոցների վրայ 257 ռուբլի։

Այսպիսով կրթական գործի վրայ Եկեղ. Հոգաբարձութիւնը 1910 թ. ընթացքում ծախսել է աւելի քան 30,000 ռ։

Եկեղեցական հոգաբարձութեան միւս ծախսերի յօդուածներն են Անկեղանոցի վրայ 7495 ռ. 84 կ., միանուագ և ամսական կանոնաւոր նպաստ չքաւորներին և հիւանդներին դրամով և տնուորով 2120 ռ. 75 կ., Վանի Վարագայ վանքին 178 ռ. 62 կ., վարչական ծախքն ընդամենը 3440 ռ. է լոկ. իսկ մնացեալը գործադրուած է, յատուկ նպաստների, նոր գուրթեանց, հարկի պարտքի շինուցման և այլն։

Եկեղ. Հոգաբարձութիւնը սան պահում է բարձրագոյն ուսումնարաններում 16 հոգի, գպրանոցում (երթևեկ և գիշերութիկ) 60 հ., ճեմարանում 2 հ, միւս դպրոցներում 6 հ. ոգի։ Հոգաբարձութեան Որբանոցում խնամուելիս է եղել 30 երեխայ, 15 մանուկ և 18 աղջիկ, որոնցից 18 հոգի գնում է ուսումնարան, իսկ մնացեալը պատրաստուում է որբանոցում։

Անկեղանոցում եղել է 80 հոգի 48 այր և 32-ը կին. տարուայ ընթացքում վախճանել կամ արձակուել է 24 հոգի։ Յունվ. 1911 ամի կային 56 հ., որից 39 կին և 17 այր. Այդտեղ ժամանակաւոր ապաստանարան տրուած է նաև պանդուխտներին։ Անկեղանոցի ու Որբանոցի խնամակալներն են Տ. Պօղոս քհ. Բեղելեան և պ. Կարապետ Խօջայեան։

Ուրթերբոգ տարին է, որ Հոգաբարձութիւնը պահում է ճեմարանի դպրոց-արհեստանոցը, որ երեք տարուայ կուրս ունի այն աշակերտուհիների համար, որոնք դպրոց մտնելիս

քիչ շատ կար գիտեն, իսկ միւսների համար կուրսը 3 տարի աւելի է։ Այդտեղ աշակերտուհիները ստանում են նաև ձրի սնունդ, իսկ խիստ չքաւորները նաև հանդերձ և կօշիկ։ Աշակերտուհիների թիւը 25 է։

Եկեղեցական հոգաբարձութեան հաշիւը կազմուած է շատ հանգամանօրէն և կարդացւում է հետաքրքրութեամբ, մի հանգամանք, որ կարելի չէ ասել ամէն հաշուի համար։ Լեզուն մաքուր և ոգեղէն է, արևմտեան բարբառով։ Մեր ներկայ հրապարակախօսներից շատերը կարող էին օրինակ առնել այդ կողմից Ն. Նախիջևանի պէս մի հեռաւոր գաղութում գրուած լեզուից։ Այն միջոցին, երբ մեր ներկայ գրականութիւնը ողողուած է օտարաբանութիւններով, այդ մեր հեռաւոր հայ գաղութը օրինակ է տալիս մաքուր հայերէն լեզուի։

Վատահ ենք, որ Ն. Նախիջևանի եկեղեցական Հոգաբարձութիւնը դեռ շատ ծառայութիւններ կմատուցանէ ոչ միայն տեղի գաղութին, այլ և համայն հայութեանը իւր այդ օրինակելի գործունէութեամբ, որ ցոյց է տալիս առանց աղմուկի, առանց թմբկահարութեան։ Մ. Վ.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Սեպտեմբերի 1-ին կիւրակի, թատրոնական ներկայացման ժամանակ չարագործի ձեռքով ծանր վիրաւորուեց և նոյն ամսի 5-ին, երեկոյեան ժամը 10-ին մի տէր հանգեաւ նախարարների խորհրդի նախագահ և ներքին գործերի նախարար Պ. Ա. Ստոլիպին։